Ախուրիկ

Ախուրիկ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 918.0հա, բնակչությունը 1090 մարդ: Գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան մասում, Գյումրիից 6 կմ դեպի հայ-թուրքական սահմանի մոտ: Համայնքի տարածքում կա 7-րդ դարի սահմանային հսկողության եկեղեցիների մնացորդներ: Բնակավայրի հեռավորությունը համայնքային կենտրոնից 12 կմ է, ծովի մակերևույթից բարձրությունը 1428մ: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են պտղաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Հայ-թուրքական սահմանից հեռավորությունը 1 կմ է: Ունի դպրոց, բուժամբուլատորիա, հիմնահորոգվում է մանկապարտեզի շենքը: